

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ



ՍԵՐՁԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

*ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր*

ՇՈՒՇԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զբոսաշրջությունը դարձել է աշխարհի առավել արագ զարգացող և մրցունակ բնագավառներից մեկը: Ենթադրվում է, որ մոտակա տարիներին միջազգային զբոսաշրջիկների թիվը կհասնի 1,5 մլրդ-ի, իսկ այս ոլորտի ծախսերի գումարը՝ 2 տրիլիոն ԱՄՆ դոլարի¹:

2003 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև 2008 թ. փետրվարի 13-ին ՀՀ Կառավարության ընդունած «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով» պետականորեն կարգավորվում է այս ոլորտի գործունեությունը, սակայն ճշմարտությունն այն է, որ մեզ համար հույժ կարևոր այս բնագավառում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում լուծման կարիք ունեցող բազմաթիվ խնդիրներ կան:

Թեև Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միջազգային զբոսաշրջության զարգացման մարդածին ու բնական բազմազան, անզուգական, ռեկրեացիոն (հանգստի) ռեսուրսներ ունեն, սակայն այս բնագավառի ամենամրցունակ 139 երկրների շարքում զբաղեցնում են միայն 90-րդ տեղը:

Մինչդեռ, սպասարկման, շրջակա միջավայրի պահպանության, բարձրորակ կադրերի պատրաստման և ոլորտի համար անհրաժեշտ այլ պահանջ-

¹ Տե՛ս «Հայաստանի զրուցակից», N 46, 2011:

ների, պետական հոգածության առկայության դեպքում զբոսաշրջությունը կարող է դառնալ հայկական երկու հանրապետությունների եկամտի կարևոր աղբյուրներից մեկը:

Միջազգային զբոսաշրջության զարգացման գործում կարևոր դեր ունի ոչ միայն բնական և մարդածին հրաշալի ռեսուրսների առկայությունը, այլև, առաջին հերթին, դրանք միջազգային զբոսաշրջիկներին ներկայացնող մասնագետը: Հարկ է նշել սակայն, որ այդ բնագավառում աշխատող կադրերի ավելի քան 90%-ը չունի մասնագիտական կրթություն՝ հայոց պատմությունը, աշխարհագրությունը, բնությունը, մշակույթը, տնտեսությունը, բնակչությունը ներկայացնող մասնագիտական կրթություն: Ահա թե ինչու ՀՀ և ԼՂՀ այցելող զբոսաշրջիկների ոչ մեծ թիվը պայմանավորված է մի կողմից՝ այդպիսի մասնագետների բացակայությամբ, մյուս կողմից՝ հյուրանոցային և տրանսպորտային սպասարկման բարձր գներով:

Քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող արտասահմանցի զբոսաշրջիկները երկիր կարող են մուտք գործել միայն Հայաստանի Հանրապետության տարածքով, ապա հայկական այս երկու հանրապետությունների զբոսաշրջային համակարգերը մեկը մյուսի շարունակությունն են և, փաստորեն, բոլոր առումներով պետք է միասնանան: Ըստ որում, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական համակարգը բարձրորակ, բազմակողմանի զարգացած մասնագետներ պետք է պատրաստի նաև ԼՂՀ զբոսաշրջային համակարգի համար՝ մինչև ԼՂՀ բուհերում ևս այդ գործընթացի արմատավորումը:

Հիրավի, Արցախի՝ էկոլոգիական առումով մաքուր բնությունը և ռեկրեացիոն բազմազան ռեսուրսները հանգստի ու զբոսաշրջության ինդուստրիայի կազմակերպման լայն հնարավորություններ են ընձեռում: Դրանք մեղմ կլիմայական պայմաններն են, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, զուլալ ու մաքուր գետերը, աղբյուրները, հանքային ջրերը, բնության անձեռակերտ հրաշալիքները և պատմաճարտարապետական հնագույն հազարավոր հուշարձանները:

Արցախը շատ հնուց հայտնի է տաք և սառը հանքային ջրերով, որոնցից առավել հանրահայտը Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող «երկաթաջուրն է», որը դեռ 1890-ական թվականներին գրավել է Մակար Բարխուդարյանի ուշադրությունը²:

Հենց այդ ռեսուրսներն էլ անվանում են ռեկրեացիոն, որոնք հիմք են հանդիսանում մարդու հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար:

Արցախ աշխարհի նշված ռեսուրսները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ առողջապահական, զանգվածային, հանգստի ու զբոսաշրջային-մարզական:

Համեմատաբար բազմազան են առողջարանային ռեսուրսները, որոնք ներառում են հանքային բուժիչ ջրերի աղբյուրները, լեռնային մաքուր օդը, ջերմությունը, ուլտրամանուշակագույն ճառագայթները, մեղմ կլիման և անտառային հոծ զանգվածը: Ի դեպ, անտառները կազմում են ԼՂՀ տարածքի 46.5%-ը (համեմատության համար նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը 10-12% է): Այսպիսով՝ Արցախի ընդարձակ, բազ-

² Տե՛ս Մակար Եպիսկ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 11:

մագան պտուղներով հարուստ զանգվածները հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման կարևոր նախապայման են:

Առողջապահական և հանգստի ոլորտի զարգացման առումով կարևոր դեր կարող են ունենալ Շուշիի շրջանը, Հադրութի շրջանի հյուսիսային մասը՝ Տումի-Ազոխ-Դրախտիկ գոտին, Մարտակերտի շրջանի Քուլատակ գյուղի հանգույցն ու Թարթառ գետի միջին ավազանը:

Ձանգվածային հանգստի համար շատ նպաստավոր են Թարթառ, Կարկառ, Կարանդա, Խոնաշեն գետերի միջին ու վերին հոսանքների գեղատեսիլ անտառածածկ ավազանները, Սարսանգի ջրամբարը, բոլոր շրջաններում առկա անտառածածկ սարավանդները:

Զբոսաշրջային-մարզական ոլորտի կազմակերպման համար շատ նպաստավոր պայմաններ ունեն Ղարաբաղի, Մռավի լեռնաշղթաների ու դրանց բազմաթիվ ճյուղերի բարձրադիր գագաթները (Գոմշասար, Մռավ, Քառասուն աղջիկ, Մեծ Քիրս, Փոքր Քիրս, Դիզափայտ, Բովուրխան), լեռնազանգվածների լանջերը, որոնք տարվա զգալի մասը ձյունածածկ են և հարմար են նաև դահուկային մարզաձևի զարգացման համար:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև նշված տարածքի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները:

Զբոսաշրջային և գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հադրութի շրջանի Ազոխ գյուղի մոտ գտնվող քարանձավային ընդարձակ սրահները, որտեղ հայտնաբերվել է արցախյան տարազով մի կնոջ արձան՝ գրկում երեխա:

Արձանը հազարամյակների պատմություն ունի, կոփված է քարից, կնոջ հագուստն ու գլխի փաթաթոցը ներկայացնում են Արցախի կանանց հնագույն տարազը: Ազոխի քարանձավի նյութական մշակույթի մնացորդները վկայում են, որ հայերը տեղի հնագույն և միակ բնիկ ժողովուրդն են:

Այժմ այստեղ հայերի հետ ուսումնասիրություններ են կատարում անգլիացի ու գերմանացի հնագետները, որոնց ինքնատիպ գտածոներն ապացուցում են, որ արցախցիները հարյուրհազարավոր տարիներ առաջ էլ այստեղ են ապրել:

Արցախի այս զբոսաշրջային օբյեկտը կարելի է համեմատել եգիպտական հնությունների հետ (խոսքը ժամանակաշրջանի մասին է): Այսինքն՝ միջազգային զբոսաշրջության առումով դա կարող է մեծ հետաքրքրություն առաջացնել:

Ձանգվածային հանգստի և մարզական զբոսաշրջության կազմակերպման լավ հիմքեր են Ամարասի, Գանձասարի, Դադիվանքի, Գտչավանքի, Մայրաբերդի, Շուշիի ու հատկապես նախալեռնային ու լեռնային վայրերում գտնվող հնագույն բազմաթիվ ճարտարապետական համալիրները: Դրանք բոլորն էլ պատմագիտական, ճանաչողական մեծ նշանակություն ունեցող մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ են: Ըստ որում, Գանձասարը՝ հայ ճարտարապետության 13-րդ դարի հանրագիտարանը (այդպես է անվանել այս անգուգական կոթողը ռուս արվեստաբան Յակոբսոնը), կառուցվել է 1216-1238 թթ.:

Ամարասը Էջմիածնի վանքի հասակակիցն է, կառուցվել է 4-րդ դ. սկզբին Գրիգոր Լուսավորիչի ու նրա թոռ Գրիգորիսի կողմից: Վերջինս թաղված է այստեղ: Կան փաստեր, որ Մ.Մաշտոցը հայ գրերի տարածումն սկսել է

Ամարասից, որտեղ ևս բացել է առաջին դպրոցը³: Հաշվի առնելով այս եզակի ռեսուրսների մեծ նշանակությունը՝ ամեն տարի այստեղ են գալիս զգալի թվով արտասահմանցի մասնագետներ, պետական գործիչներ, զբոսաշրջիկներ:

Անկախություն ձեռք բերելուց հետո Արցախի ժողովուրդը ինքն է տնօրինում իր ռեսուրսները, որոնք կարող են դառնալ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր աղբյուրներից: ԼՂՀ-ում առողջապահական, հանգստի ու զբոսաշրջային-մարզական ժամանակակից համակարգի ստեղծումը ոչ միայն կբավարարի հանրապետության բնակչության պահանջները, այլև կարող է ձեռք բերել միջազգային նշանակություն: Առողջարանային ժամանակակից համակարգի ստեղծման եզակի պայմաններ ունի Շուշին, որը գտնվում է ծովի մակերևույթից 1450-1500 մ բարձրությամբ անզուգական գեղեցիկ սարահարթի վրա՝ շրջապատված Ղարաբաղի լեռնաշղթայի բարձրադիր լեռնաճյուղերով⁴: Լեռնային մաքուր օդը, չափավոր տաք ամառը, մեղմ ձմեռը նախապայմաններ են, որոնք ապահովում են առողջարանային համալիրի շուրջտարյա գործունեությունը: Այստեղ տարեկան միջին ջերմաստիճանը 8,4°C-ը է, ամենատաք ամիսը հուլիսն է՝ 18,9°C միջին ամսական ջերմությամբ, հունվարն ամենացուրտ ամիսն է՝ -15 °C⁵:

Կլիմայական այսպիսի պայմանները նպաստավոր են մարդու առողջության, բուժման և հանգստի համար: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ այստեղ կարող է օգտագործվել փոքր հեռավորության վրա գտնվող Շուշան աղբյուրների բուժիչ հանքային ջուրը, ապա դա, հիրավի, կվերականգնի Շուշիի երբեմնի բարի համբավը, և վերջինս կդառնա ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող առողջարանային քաղաք:

Դեռ խորհրդային իշխանության տարիներին այստեղ գործում էր հանրապետական նշանակության առողջարան: Սակայն 1988-1992 թթ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով 1000-տեղանոց առողջարանի բոլոր 8 մասնաշենքերն ու բուժման, սպասարկման, օժանդակ հարմարությունները շարքից դուրս են եկել:

Շուշիում մոտակա հեռանկարում նախատեսվում է 100-տեղանոց առողջարանային համալիրի վերականգնումը. հետագայում տեղերի թիվը կհասցվի 2.5-3.0 հազարի: Այդ նպատակով անհրաժեշտ կլինեն երկու առողջարանային մասնաշենքեր, որոնք, ընդհանուր առմամբ, կունենան 2000 տեղ:

Կարծում ենք՝ նպատակահարմար է Շուշիում կազմակերպել նաև սպասարկող անձնակազմի պատրաստման համապատասխան կենտրոն:

Շուշիի բնական պայմանները նպաստավոր են նաև հակապալարային մանկական առողջարանի ստեղծման համար: Նախկինում այստեղ եղել է այդպիսի 100-տեղանոց առողջարան, որը, սակայն, զուրկ է եղել տարրական հարմարություններից, իսկ այժմ էլ կիսավեր վիճակում է:

Նոր մանկական առողջարանում կարող են բուժվել ոչ միայն ԼՂՀ, այլև ՀՀ Սյունիքի մարզի հիվանդ երեխաները:

Այսպիսով՝ մեր կարծիքով, մոտակա հեռանկարում Շուշին կդառնա ԼՂՀ առողջարանային կենտրոն, իսկ ապագայում, երբ Շուշին միջազգային

³ Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Գանձասար, 1981, էջ 9:

⁴ Տե՛ս **Ս. Մելքումյան**, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., 1997, էջ 221:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 232-233:

Ճանաչում ստանա, հարկ կլինի համեմատաբար սահմանափակ տեղերով առողջարաններ կառուցել Հաղրութի շրջանի Տունի գյուղի մոտ գտնվող գեղատեսիլ անտառում, ինչպես նաև Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ, որտեղ նույնպես բուժիչ ջրի աղբյուրներ կան:

Մինչև 1980-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում միայն ամռան ամիսներին գործող միակ հանգստյան տունը եղել է Շուշիում, որն այսօր նպատակահարմար չէ վերականգնել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող հանգստյան տների կառուցման համար անհրաժեշտ պայմաններ կան ԼՂՀ վարչական բոլոր շրջաններում: Մասնավորապես, հնարավորություններով պայմանավորված՝ նախընտրելի են Մարտունու շրջանի Թաղավարդ, Ասկերանի շրջանի Բադարա, Մարտակերտի շրջանի Քոլատակ, հետագայում նաև Թալիշ, Հաղրութի շրջանի Դրախտիկ գյուղերի հանգույցները: Դրանք բոլորն էլ ունեն գեղատեսիլ բնության, պտղառատ անտառներ, մեղմ կլիմա, զուլալ գետեր, աղբյուրներ:

Շուշին կարող է դառնալ նաև ԼՂՀ տուրիզմի հիմնական կենտրոն: Այստեղ կստեղծվի 500 տեղանոց միանգամայն նոր բազա իր բոլոր հարմարություններով: Մասնաձյուղեր կծեկավորվեն Վանք (որտեղ հանրահայտ Գանձասարի վանքն է) և Թաղավարդ գյուղերում: Ջրոսաշրջիկների համար առանձնահատուկ հետաքրքրություն կներկայացնի նախկին ԽՍՀՄ տարածքի ամենատարեց՝ Սխտորաշենի 200-ամյա ծառն իր շքեղ տեսքով ու կայծակի հարվածից առաջացած հսկա փչակով, որտեղ տեղավորվում է 100 մարդ: Այս ծառի ստվերում հանգստացել են Գրիգոր Կաղանկատվացին, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Ռաֆֆին, Ավետիք Իսահակյանը:

Հարկ է նշել, որ ԼՂՀ-ում զբոսաշրջությունը կարող է զարգանալ միայն ՀՀ զբոսաշրջության հետ սերտորեն փոխկապված: ԼՂՀ զբոսաշրջային ուղիների ցանցը պետք է դառնա ՀՀ համապատասխան ցանցի բաղկացուցիչ մասը: Դրանք պետք է միահյուսվեն Տաթև-Գորիս-Բերձոր-Շուշի և Սևան-Սողք-Տաքջուր (Իստիսու)-Գանձասար ու Շուշի երթուղիներով:

Ջրոսաշրջության ու հանգստի ոլորտը ԼՂՀ տնտեսության հեռանկարային այն հիմնական ուղիներից մեկն է, որն ունի զարգացման հիմնավոր նախադրյալներ և լեռնաշխարհի բնապահպանական վիճակի վրա բացասական ազդեցություն չի թողնի:

СЕРГЕЙ МЕЛКУМЯН

Профессор кафедры „Макроэкономики” АГЭУ,
доктор географических наук

ШУШАН АРУТЮНЯН

Преподаватель кафедры „Макроэкономики” АГЭУ

Предпосылки развития индустрии туризма и отдыха в Нагорно-Карабахской Республике. По утверждением авторов, индустрия туризма и отдыха может стать наиболее прибыльной отраслью перспективного развития экономики НКР. По истине, с экологической точки зрения чистая природа Арцаха, его разнообразные ресурсы имеют широкие возможности для организации индустрии туризма и отдыха. С этой точки зрения потенциальные возможности широки в Шушинском, Гадурдском и Мартакертском районах. Однако, по мнению авторов, эти возможности далеко не используются. При том, имеющиеся здесь древние, великолепные историко-архитектурные комплексы Амараса, Гандзасара, Дадиванка, Шуши и др. вместе с уникальными природными рекреационными ресурсами могут стать широкой базой для развития международного туризма и отдыха.

SERGEY MELKUMYAN

Professor at the Chair of „Macroeconomics”
at ASUE, Doctor in Geographical Sciences

SHUSHAN HARUTUNYAN

Lecturer at the Chair of „Macroeconomics” at ASUE

Premises for the Development of Tourism and Recreation Industry in the Nagorno-Karabakh Republic. According to the authors the industry of tourism and rest can become the most profitable branch for the perspective development of the NKR economy. In fact, from the ecological point of view the splendid pure nature of Artsakh and its different recreation resources provide opportunities for the organization of tourism and recreation industry. From this point of view the potential opportunities are especially in the regions of Sushu, Hadrut and Martakert. However, according to the authors these opportunities are not used at all. Meanwhile, the ancient wonderful historical and architectural monuments in Amaras, Gandzasar, Dadivank, Shushi and others along with the unique natural recreation resources can become a solid base for the development of international tourism and recreation.

